Սիրիայում տիրող իրավիճակը վերջին ժամանակների, թերևս, ամենահաճախ շոշափվող ու ահազանգող թեմաներից է: Եվ հաշվի առնելով սիրիահայության հոծ զանգվածը և նրանցից շատերին սպառնացող վտանգն ու անհանգստության տեղիք տվող ճակատագիրը, խոշոր մասշտաբներով գաղթը հայրենիք, անհրաժեշտություն է առաջանում ավելի խորն ուսումնասիրություններ կատարել սիրիահայության, նրանց՝ երկար ժամանակ վարած կենսակերպի, հուզող խնդիրների և, վերջիվերջո, այդ խնդիրների հետ կապված հնարավոր լուծումների վերաբերյալ: Այս հարցերի շուրջ զրուցեցինք Մերձավոր Արևելքի ամենաճանաչված գիտակներից մեկի՝ պատմական գիտությունների թեկնածու ՆՈՒԲԱՐ ՉԱԼԸՄՅԱՆԻ հետ:

«ՀԱՅԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ԼԵՌՆԵՐՈՎ»

Նուբար Տրդատի Չալըմյանը ծնվել է Իրաքում:

1967թ. ավարտել է միջնակարգ դպրոցը Երևանում:

Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի արաբական բաժինը:

1972թ. գերազանցությամբ ավարտել է համալսարանը՝ ստանալով արևելագետ-պատմաբանի որակավորում:

1973թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրա:

1973-1974թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1977թ. ավարտել է ասպիրանտուրան և անցել աշխատանքի Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես գիտաշխատող:

1978-1979թթ. աշխատել է ԽՍՀՄ արտաքին տնտեսական կապերի պետական կոմիտեում՝ Լիբիայում:

1982թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1983-1985թթ. աշխատել է ԽՍՀՄ արտաքին տնտեսական կապերի պետական կոմիտեում՝ Սիրիայում:

1985-1991թթ. աշխատել է Գիտությունների ակադեմիայի Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող, սեկտորի վարիչ:

1991-1992թթ. աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում՝ որպես առաջին քարտուղար:

1992-2009թթ. պաշտոնավարել է ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանությունում:

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչն է: Հեղինակ է մենագրությունների, բազմաթիվ հոդվածների, բուհական ձեռնարկների:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

- Պարոն Չալըմյան, ե՞րբ և ինչպե՞ս են հայերը հայտնվել Սիրիայում:

- Պատմական Սիրիան կամ Ասորիքը հնագույն ժամանակներում սահմանակից է եղել Հայաստանին: Հայկական բարձրավանդակից էին անցնում Հին Արևելքի միջազգային ճանապարհները, որոնք նպաստում էին առևտրական և մշակութային կա-



պերի զարգացմանը՝ Հայաստանի և Սիրիայի միջև: Հայերը Սիրիայում դեռ հնագույն ժամանակներում են հայտնվել, և դա մեծապես կապված է Տիգրան Մեծի անվան հետ, ով հասավ մինչև Պաղեստին: Գրավելով Միջագետքը և Սիրիայի տարածքի մեծ մասը՝ նա տիրեց միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն կենտրոններին, որի հետևանքով Սիրիայում աշխուժացան առևտուրն ու տնտեսական կյանքը, մեծացան ու բազմամարդ դարձան քաղաքները: Այս ժամանակներից է, որ մեծ թվով հայ առևտրականներ ու արհեստավորներ բնակություն հաստատեցին Սիրիայում: Ես ինքս իմ անձնական փորձից կարող եմ դա փաստել. 80-ականներին աշխատելով Սիրիայի Արաբական Հանրապետությունում՝ ինձ հաջողվել է լինել Սիրիայի հյուսիսային այն հատվածներում, որտեղ անգլիացիները պեղումներ էին կատարում, և այդ ընթացքում պեղվեցին Տիգրան Մեծի հետ առնչվող շատ գտածոներ, օրինակ՝ դրամներ՝ Տիգրանի պատկերով, որոնք գալիս են ապացուցելու այն, որ հայերը Սիրիայում շատ վաղ ժամանակներից են եղել: Աստիճանաբար գալով Սիրիա՝ հայերը տարբեր քաղաքներում են կենտրոնանում՝ Հալեպ, Սվերդիա, Ալեքսանդրետ, Քեսաբ, Տրիպոլի, Դամասկոս, բայց հայերի ամենամեծ կուտակումը եղել է Հալեպ քաղաքում՝ ստեղծելով հայկական թաղամասեր: Հնագույն ժամանակներից տարբեր երկրներից, այդ թվում և արաբական, տեղի է ունեցել հայերի գաղթ դեպի Սիրիա, և այս տենդենցը շարունակվեց մինչև մեր օրերը: Հինգերորդ դարում, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, շատ հայեր գաղթեցին Սիրիա: Հետագա դարերում սա կապված էր արդեն թուրք-սելջուկյան և մոնղոլաթաթարական տիրապետությունների հետ: 1895-1896թթ. և 1909թ. հայերի զանգվածային ջարդերը հարցականի տակ էին դրել Սիրիայի հայ համայնքի գոյության հարցը: Սակայն երիտթուրքերն իրենց հրեշավոր գործերն սկսեցին առաջին աշխարհամարտի տարիներին: Մեծ Եղեռնից հետո հազարավոր հայ տարագիրներ, փրկվելով կոտորածից, ապաստան են գտնում Սիրիայում: Եվ նույնիսկ 2003թ., երբ Իրաքում հայության համար բավականին դժվար իրադրություն ստեղծվեց, մեծ թվով հայեր տեղափոխվեցին Սիրիա: Եվ այսօր, երբ Սիրիայում է արդեն վիճակը բարդ, նրանք գնում են ավելի խաղաղ արաբական երկիր, ասենք, Իրաք: Այսինքն, բավականին տևական ժամանակ հայերը ապրել են Սիրիայում, և նույնիսկ 70-ականների ոչ բարենպաստ քաղաքական անցուդարձերի ժամանակ շատերը տեղափոխվել են Սիրիա, այդ թվում և հարևան Լիբանանից:

- Երկար ժամանակ ապրելով Սիրիայում՝ սիրիահայությունը երբեք չի կանգնել ուծացման վտանգի առջև: Ինչպե՞ս է նրանց հաջողվել այսքան ժամանակ անթերի պահպանել ազգային դիմագիծը:

- Այստեղ կարևոր դեր է խաղում կրոնը, քրիստոնեության գործոնը: Սիրիայում և մնացած մյուս արաբական երկրներում, որտեղ պաշտոնական կրոնը մահմեդականությունն է, հայերը, բնականաբար, պիտի աշխատանքներ տանեին իրենց կրոնը, և այդպիսով կրենց ինքնությունը պահպանելու ուղղությամբ: Սիրիայում, երբ հայերի թիվը մեծացավ, նրանք առաջին հերթին կառուցեցին եկեղեցիներ, ստեղծեցին վարժարաններ, և այսպիսով պահպանեցին իրենց ինքնությունը՝ չձուլվելով արաբների հետ: Իհարկե, շատ հազվադեպ պատահում են խառնամուսնություններ, բայց դա չի քաջալերվում, չի խրախուսվում, և արաբական աշխարհում հայերի ինքնությունն ավելի լավ է պահպանվել:

- Իսկ ինչո՞վ է զբաղվում հայ համայնքը Սիրիայում, և ի՞նչ դեր է այն խաղում Սիրիայի տնտեսական, մշակութային, գիտական կյանքում:

- Ուսումնասիրելով Սիրիայի պատմությունը, կնկատենք, որ երկար դարեր Սիրիան, մյուս արաբական երկրների պես, գտնվում էր Օսմանյան լծի ներքո: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1916թ., Սայքս-Պիկոյի պայմանագրով Սիրիան անցավ Ֆրանսիայի մանդատի ներքո՝ մինչև Սիրիայի անկախացումը՝ 1943թ.: Մինչ այդ՝ 20-ականներից հայերի մի ստվար զանգված գաղթել էր Սիրիա: Առաջին սերունդը՝ ցեղասպանության սերունդը, հիմնականում արհեստավորներ էին: Հենց այդ ժամանակներից էլ հայերը մեծ հեղինակություն ձեռք բերեցին՝ որպես նախ և առաջ աշխատասեր, ազնիվ արհեստավորներ: Ես ինքս շատ պատվիրակություններում եմ եղել, այդ թվում և 1979թ. հոկտեմբերին, երբ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը իր գոհունակությունը հայտնեց հայերին, որպես պարկեշտ փոքրամասնություն՝ եռանդուն, ամենուրեք հարգանք ու սեր վայելող: Այսօր սիրիահայ համայնքի մշակութային կյանքի կազմակերպման գործում կարևոր դեր ունի Հայկական բարեգործական ընդհանուր միության սիրիական մասնաճյուղը:

Սիրիահայությունն իր արժանի լուման է ներդնում երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, մշակույթի զարգացման մեջ: Սիրիայի արաբները մեծ հարգանք են տածում հայերի նկատմամբ: Նրանք գիտեն հայ ժողովրդի պատմության ողբերգական ու հերոսական էջերն, անցած ուղին և միշտ ձգտում են ամենուրեք պահել իրենց հարաբերությունները հայերի հետ: Եվ նույնիսկ կարող ենք նշել՝ մյուս ազգային փոքրամասնությունների համամատ որոշ խտրականություն՝ ի նպաստ հայերի:

- Անդրադառնալով վերջին իրադարձություններին՝ ի՞նչ դիրքորոշում ունի հայ համայնքը այդ ամենի նկատմամբ:

- Ցավով պետք է նշեմ, որ Սիրիայում ևս, ինչպես արաբական և եվրոպական շատ երկրներում, գաղափարական առումով հայերը միասնական չեն: Ոչ լեգալ գործում են հայկական ավանդական քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Ռամկավար-ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը, իսկ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը կար նաև կոմունիստական կուսակցությունը: Սակայն պիտի խոստովանեմ, որ սիրիահայության կյանքում նման ցնցում առաջին անգամ է տեղի ունենում: Հայերի համար սա անսպասելի էր, և նրանց դիրքորոշումը ևս ենթարկվեց այդ հանկարծակիությանը: Իշխող կուսակցությունը՝ ԲԱԱՄ-ը, միշտ դրական վերաբերմունք է ունեցել հայերի նկատմամբ, և հայերը, բնականաբար, պիտի կանգնեին Բաշար Ալ Ասադի կողքին, ով միշտ հարգանք է տածել հայ ազգի նկատմամբ: Եվ այս հարցում հայերը միասնական են: Սակայն արդեն կան փաստեր, որ ընդդիմադիր Ազատագրական բանակը արդեն հայտնվել է հայկական թաղամասերում, հատկապես Հալեպ քաղաքում, և կան տվյալներ, որ հայեր են զոհվել: Նման պայմաններում հայերի համար երկու ելք կա. կա՛մ գալ Հայաստան, կա՛մ տեղափոխվել հարևան Լիբանան: Եվ հաշվի առնելով եվրոպական երկրների վերաբերմունքը Սիրիայի իշխանության նկատմամբ, նրանք աշխատում են մուտքի-ելքի արտոնագրեր չտալ:

- Դուք նշեցիք, որ սիրիահայության մի մասի համար Հայաստան գալը խնդրի լուծում է հանդիսանում, իսկ ի՞նչ խնդիրներ կծագեն Հայաստանում վերջիններիս ներկայության պայմաններում: Ի՞նչ միջոցներով նրանք կինտեգրվեն մեր հասարակությանը:

- Նման և ավելի բարդ իրավիճակում հայտնվեց մի քանի տարի առաջ իրաքահայությունը, որն, իհարկե, թվով ավելի նոսր էր: Ամերիկյան օկուպացումից հետո, երբ իշխանության եկան իսլամիստները, քրիստոնյա հայերին շատ անգամ ստիպում էին վերադառնալ իրենց հայրենիքը այն դեպքում, երբ տասնյակ տարիներ նրանք ապրել են կողքկողքի հաշտ ու համերաշխ: Այս մասին հայկական կողմը պիտի ավելի վաղ հոգար, մեծ երազանքի՝ հայրենադարձության համար համապատասխան ռազմավարական գործողություններ կատարելով:

Շատ հնարավոր է, որ արաբական այլ ռեգիոններում, օրինակ՝ Եգիպտոսում, քաղաքական իրավիճակը սրվի, և հայերն ստիպված լինեն վերցնել հայրենադարձության ցուպը: Ինտեգրման պրոցեսն արագացնելու համար կառաջարկեի մի քանի միջոցառումների դիմել. առաջինը՝ հարկավոր է ուսումնասիրել գաղթականների սոցիալական վիճակը: Հետո պետք է պարզել, թե նրանցից ովքեր են եկել մշտական բնակություն հաստատելու, ովքեր՝ ժամանակավոր, և մշտական բնակություն հաստատել ցանկացողներին անհապաղ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհել: Ժամանակավոր բնակություն հաստատել ցանկացողներին պետք է տալ փախստականի կարգավիճակ: Սակայն այստեղ մեկ այլ հարց է ծագում. արդյո՞ք ոմանց համար Հայաստանը պիտի հանդիսանա ցատկահարթակ՝ մեկ այլ երկիր չվելու համար, ինչպես դա եղավ իրաքահայերի պարագայում: Հարկ է նաև ուսումնասիրել, թե այդ հազարավոր հայերն ինչով են զբաղվել և նրանց աշխատելու հնարավորություն տալ: Հաջորդ միջոցը վերաբերում է կրթությանը, և այս ասպարեզում սիրիահայությանը պետք է շնորհվեն արտոնություններ: Կլինեն դժվարություններ՝ լեզվական և այլն: Լսել եմ, որ հատուկ դպրոց է բացելու, միտք կար՝ արևմտահայերեն ծրագրով: Կցանկանայի, որ այնտեղ աշխատեին հենց գաղթական ուսուցիչներն ու ուսուցչուհիները: Ինչ վերաբերում է համալսարաններին, ապա սիրիահայ գաղթականներին պետք է հատկացվի անվճար կամ գոնե զեղչային համակարգով սովորելու հնարավորություն: Հաջորդ միջոցառումը կապված է բուժօգնության հետ՝ լինի դա դեղօրայք, վիրահատություն կամ այլ տեսակի օգնություն: Հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ սիրիահայ գաղթականությունը չզղջա, որ եկել է, ցանկություն չունենա մեկնելու այլ երկիր, այլ ցանկանա մնալ իր հայրենիքում: Հաջորդիվ կուզենայի հայացք ուղղել դեպի ավելի գլոբալ խնդրին՝ զանգվածային հայրենադարձությանը: Մի՞թե դրա համար այժմ ավելի լավ պայմաններ ստեղծված չեն, քան 1946-1947թթ. կամ 1965թ.: Օրինակ, Սիրիայի հյուսիսային հատվածում, Թուրքիայի հարավում բավական մեծ թվով հայեր են բնակվում՝ հիմնականում քրդախոս և ուծացման վտանգի առջև կանգնած: Իսկ այսօր Արցախում և ազատագրված տարածքներում բնակչությունը նոսր է, և պետությունը տարբեր միջոցներով խրախուսում է այնտեղ տեղափոխվել ցանկացողներին: Եվ ըստ իս, մարդը նույն կերպ, նույնիսկ ավելի լավ պայմաններով կարող է շարունակել իր կյանքը Արցախում: Տվյալ պարագայում կլուծվի ռազմավարական երկու կարևոր խնդիր. հայության այդ հատվածը կփրկվի ուծացումից և կլուծվի Արցախի բնակեցման խնդիրը: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ավարտվեցին այն լավ օրերը, երբ հայերը Արաբական աշխարհում իրենց լավ էին զգում: Հայերի ինտելեկտուալ մակարդակը միշտ էլ ավելի բարձր է եղել արաբներից, ինչն էլ նրանց թույլ է տվել իրենց լավ զգալ այդ երկրներում, սակայն արաբների նմանատիպ զարթոնքը կասեցնում է այդ ամենը:

- Եվ վերջին հարցը. ի՞նչ եք կարծում. սիրիահայերը պիտի պահպանեն արևմտահայերենը, թե՞ ավելի ճիշտ կլինի, որ սովորեն և սկսեն գործածել արևելահայերենը:

- Իմ կարծիքով՝ թե՛ արևմտահայերենը, թե՛ արևելահայերենը յուրովի գեղեցիկ են, ճոխ, և նույնիսկ այս հանգամանքներում պետք է պահպանել նրանցից յուրաքանչյուրը: Դպրոցներից զատ՝ վատ չէր լինի, եթե արևմտահայերենով խոսող ուսանողների համար հատուկ բուհեր բացվեին, սակայն այդ ամենը հնարավոր է միայն նրանից հետո, երբ կոնկրետ ճշգրտվի, թե գաղթականներից որքանը կմնա, որքանը կհեռանա ԱՄՆ, Կանադա, Եվրոպա և այլուր:

Զրուցեց
Ք. Ավագյանը